ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 279- Ա

09 հոկտեմբերի 2015 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 253-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի, <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 11-ի N664-Ն որոշման 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանով հաստատված <<Հայաստանի Հանրապետության <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի>> 17-րդ կետի պահանջը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի հունիսի 18-ի <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի Յա. Զարոբյանի անվան N8 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2007 թվականի ապրիլի 2-ի N 37/7-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 253-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ՝

   1) որոշման վերնագրում և 1-ին կետում << ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի Յա. Զարոբյանի անվան N8 միջնակարգ դպրոց >> բառերը փոխարինել << Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևանի Յա. Զարոբյանի անվան N2 հիմնական դպրոց>> բառերով.

   2)որոշման 1-ին կետում <<Հովհաննիսյան Արայիկ /ծնողխորհրդի ներկայացուցիչ/>> բառերը փոխարինել <<Ավագյան Մերի Սամվելի /ծնողխորհրդի ներկայացուցիչ/>> բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ